ՇԴ/0136/01/22

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՔՐԵԱԿԱՆ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՎԱՐՈՒՅԹԻ ԸՆԴԴԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

26 դեկտեմբերի 2022 թվական ք.Երևան

Ուսումնասիրելով թիվ ՇԴ/0136/01/22 քրեական վարույթի ընդդատության վերաբերյալ վեճը լուծելու համար Վճռաբեկ դատարանի քրեական պալատի նախագահին ուղարկելու մասին Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2022 թվականի դեկտեմբերի 7-ի որոշումը,

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

<u>Գործի դատավարական նախապատմությունը.</u>

1. 2022 թվականի նոյեմբերի 2-ին Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում ստացվել է թիվ ՇԴ/0136/01/22 քրեական վարույթն ըստ մեղադրանքի՝ Հայկազ Ցոլակի Թովմասյանի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 255-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով և 255-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով, և 2022 թվականի նոյեմբերի 3-ի որոշմամբ ընդունվել է նույն դատարանի վարույթ:

Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2022 թվականի նոյեմբերի 16-ին որոշում է կայացրել թիվ ՇԴ/0136/01/22 քրեական

վարույթն ըստ ընդդատության Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան փոխանցելու մասին:

2. Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը, 2022 թվականի դեկտեմբերի 7-ի որոշմամբ, գործի ընդդատության վերաբերյալ վեճը լուծելու համար դիմել է Վճռաբեկ դատարանի քրեական պալատի նախագահին:

3. Թիվ ՇԴ/0136/01/22 վարույթը Վճռաբեկ դատարանում ստացվել է 2022 թվականի դեկտեմբերի 19-ին:

<u>Ընդդատության վերաբերյալ վեճի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.</u>

4. 2022 թվականի հոկտեմբերի 13-ին Հայկազ Ցոլակի Թովմասյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 255-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով և 255-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով հարուցվել է հանրային քրեական հետապնդում այն արարքների համար, որ *«նա խաբեությամբ առանձնապես խոշոր չափերով հափշտակություն կատարելու միասնական դիտավորությամբ 2019 հուլիսից մինչև 2021 թվականի նոյեմբերն ընկած ժամանակահատվածում ՀՀ տարածքում առանց վարկեր տրամադրելու իրական մտադրության փակցրել է վարկեր տրամադրելու վերաբերյալ կեղծ հայտարարություններ, որոնց մեջ նշել է իր կողմից փաստացի օգտագործվող հեռախոսահամարները և իր հետ կապ հաստատած տուժողներին ներկայանալով որպես վարկային կազմակերպության աշխատակից՝ նրանցից իբր թե վարկի տրամադրման գործընթացն իրականացնելու համար միջնորդավճար կամ վարկի հաստատման համար անհրաժեշտ այլ վճար կատարելու կեղծ պատրվակով պահանջել է գումար, որից հետո վերջիններին փոխանցվել է այլ անձանց պատկանող «www.ajarabet.am» կայքի, «Իդրամ» ինտերնետ վճարային համակարգի, «Արդշինբանկ» ՓԲ ընկերության հաշվեհամարները, ինչպես նաև «ԱՅ ԴԻ ԲԱՆԿ» ՓԲ ընկերությանը պատկանող բանկային քարտի տվյալները, որոնց տուժողների կողմից փոխանցվել են գումարներ, որի արդյունքում Հայկազ Ցոլակի Թովմասյանը՝ (...) խարդախությամբ հափշտակել է առանձնապես խոշոր չափերով՝ 8.888.151 ՀՀ դրամ գումար: Այսպես.*

(…)

80) 2021 թվականի դեկտեմբերի 30-ին Գյումրի քաղաքի բնակիչ Էլիզաբեթ Սարգսի Սարաֆյանին տրամադրել է «Իդրամ» ինտերնետ վճարային համակարգի հաշվեհամար, որից հետո Է.Սարաֆյանը նշված հաշվեհամարին փոխանցել է ընդհանուր 30.000 ՀՀ դրամ գումար, որը Հ.Թովմասյանի կողմից խաբեությամբ հափշտակվել է:

(…)»[1]:

5. Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2022 թվականի նոյեմբերի 16-ի որոշմամբ արձանագրել է. *«(…) Քրեական վարույթի նյութերի համաձայն՝ Հայկազ Թովմասյանին վերագրվում է շարունակվող հանցագործություն, որի՝ քրեական օրենքով չթույլատրված վերջին արարքը կատարվել է 2021 թվականի դեկտեմբերի 30-ին, այն է՝ Գյումրի քաղաքի բնակիչ Էլիզաբեթ Սարգսի Սարաֆյանին տրամադրել է «Իդրամ» ինտերնետ վճարային համակարգի հաշվեհամար, որից հետո Էլիզաբեթ Սարաֆյանը նշված հաշվեհամարին փոխանցել է ընդհանուր 30.000 ՀՀ դրամ գումար, որը Հայկազ Թովմասյանի կողմից խաբեությամբ հափշտակվել է: Ընդ որում՝ քրեական վարույթի նյութերի՝ տուժող Էլիզաբեթ Սարաֆյանի հարցաքննության արձանագրության և կից հեռախոսահամարների վերծանումների համաձայն (հատոր 24, գ.թ. 210-214), քրեական օրենքով չթույլատրված վերջին արարքը կատարվել է Արարատի մարզի Ջրաշեն համայնքի Կամոյի փողոցի 2-րդ հասցեից, որը գտնվում է Արարատի մարզում:*

Այսպիսով՝ Հայկազ Թովմասյանին վերագրվող շարունակվող հանցագործությունը, ըստ քրեական վարույթի նյութերի, կատարվել է Արարատի մարզի Ջրաշեն համայնքի Կամոյի փողոցի 2-րդ հասցեից, որը գտնվում է ՀՀ Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատական տարածքում: Հետևաբար՝ թիվ ՇԴ/0136/01/22 քրեական վարույթն ըստ մեղադրանքի Հայկազ Ցոլակի Թովմասյանի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 255-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով և 255-րդ հոդվածի 2-րդ մասի 3-

[1] Տե՛ս քրեական գործ, հատոր 27, թերթեր 37-48, 191-194:

ող կետով, ըստ ընդդատության պետք է փոխանցել ՀՀ Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան: (…)»[2]*:*

6. Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2022 թվականի դեկտեմբերի 7-ի որոշման համաձայն՝ *«(…) [Գ]տնում եմ, որ մեղադրյալ Հայկազ Ցոլակի Թովմասյանին մեղսագրված շարունակվող ենթադրյալ հանցանքի վերջին դրվագը ենթադրաբար կատարվել և ավարտվել է Գյումրի քաղաքում, այսինքն՝ ՀՀ Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատական տարածքում: Այլ կերպ՝ ընդդատության մասին վեճի լուծման համար էական հանգամանքները թույլ են տալիս գալ եզրահանգման, որ սույն քրեական վարույթն ընդդատյա չէ ՀՀ Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին, այլ ընդդատյա է ՀՀ Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին: Նման եզրակացության հանգելու համար առանցքային նշանակություն ունի այն փաստական հանգամանքը, որ, ըստ գործի նյութերի, տուժող Էլիզաբեթ Սարգսի Սարաֆյանը 30.000 ՀՀ դրամը փոխանցել է մեղադրյալ Հայկազ Ցոլակի Թովմասյանի կողմից նշված «Իդրամ» ինտերնետ վճարային համակարգի հաշվեհամարին Գյումրի քաղաքում տեղադրված տերմինալի միջոցով: Այսինքն՝ վերջինիս սեփականության ֆոնդից, և հետևաբար, նրա տիրապետումից տվյալ դրվագով ենթադրյալ հափշտակության առարկան՝ 30.000 ՀՀ դրամ գումարը դուրս է եկել Գյումրի քաղաքում:*

Ինչ վերաբերում է այն հանգամանքին, որ ըստ տուժող Էլիզաբեթ Սարգսի Սարաֆյանի հարցաքննության արձանագրությանը կից առկա մեղադրյալի կողմից ենթադրաբար օգտագործված՝ 094-76-84-00 բջջային հեռախոսահամարի մուտքային և ելքային հեռախոսազանգերի վերծանումների (հատոր 24, գ. թ. 213-214)՝ նշված հեռախոսահամարը խնդրո առարկա հանդիսացող ժամանակահատվածում սպասարկվել է Արարատի մարզի տարածքում, գտնում եմ, որ անկանխիկ եղանակով ենթադրյալ խարդախություն կատարելու դեպքում բավարար տվյալ չէ հանգելու եզրակացության առ այն, որ հանցանքը կատարվել է Արարատի մարզի տարածքում՝ հաշվի առնելով նախորդիվ նշված հանգամանքը՝

[2] Տե՛ս քրեական գործ, հատոր 30, թերթեր 73-86:

30.000 ՀՀ դրամը Գյումրի քաղաքում տեղադրված տերմինալի միջոցով փոխանցելը: Բացի այդ, փոխանցում կատարելու ժամանակ Արարատի մարզում գտնվելը դեռևս չի նշանակում, որ մեղադրյալ Հայկազ Ցոլակի Թովմասյանը հենց այդ ժամանակ է տնօրինել փոխանցված գումարը: Հետևապես, գտնում եմ, որ սույն գործի փաստական հանգամանքների պայմաններում մեղադրյալ Հայկազ Ցոլակի Թովմասյանին մեղսագրված շարունակվող ենթադրյալ հանցագործության վերջին դրվագը ավարտվել է ՀՀ Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի տարածքում՝ Գյումրի քաղաքում:

Դրա հետ մեկտեղ Դատարանն արձանագրում է, որ սույն վարույթի մասնավոր մասնակիցների մեծամասնությունը՝ միայն 38 տուժողները և 5 վկաները բնակվում են Շիրակի մարզում: Դեռ ավելին, 2022 թվականի նոյեմբերի 16-ին տուժողներ Վարդիթեր Ռաֆիկի Մինասյանը, Նաիրա Գրիգորյանը, Լեյլի Հովսեփի Գալոյանը, Սաթենիկ Միքայելի Պողոսյանը, Վարդուշ Կոլյայի Ամիրիանյանը, Ֆրիդա Անդոյի Հովհաննիսյանը, Աղասի Գագիկի Դավոյանը դիմում են ներկայացրել ՀՀ Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին՝ խնդրելով քրեական վարույթը չփոխանցել ըստ ընդդատության ՀՀ Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան:

Բացի այդ, մինչդատական վարույթն իրականացնող մարմինն է հանդիսացել ՀՀ քննչական կոմիտեի Շիրակի մարզային քննչական վարչությունը, իսկ վերջինիս նստավայրը նույնպես գտնվում է Շիրակի մարզում, որպիսի հանգամանքն էլ, ըստ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 261-րդ հոդվածի 3-րդ մասի, ելակետային տվյալ է վարույթի տարածքային ընդդատությունը որոշելու համար՝ մեղադրյալ Հայկազ Ցոլակի Թովմասյանին մեղսագրված շարունակվող ենթադրյալ հանցագործության վերջին դրվագի կատարման հստակ վայրը որոշելու անհնարինության դեպքում:

Ամփոփելով նշվածը՝ գտնում եմ, որ սույն քրեական վարույթով ՀՀ Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի և ՀՀ Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի միջև առկա է տարածքային ընդդատության վերաբերյալ վեճ, որի լուծումը, ըստ ՀՀ

քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդվածի 4-րդ մասի, վերապահված է Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարանի Քրեական պալատի նախագահին: (…)»[3]*:*

<u>Վճռաբեկ դատարանի քրեական պալատի նախագահի պատճառաբանությունները և եզրահանգումը.</u>

7. Սույն գործով բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավոր է արդյո՞ք Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի հետևությունն այն մասին, որ թիվ ՇԴ/0136/01/22 քրեական վարույթն ընդդատյա է Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին:

8. ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք»:*

9. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Յուրաքանչյուր ոք, (…) նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք»:*

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, *«օրենքի հիման վրա ստեղծված դատարան»* հասկացությունը մեկնաբանելիս նշել է. *«Այն երկրներում, որտեղ օրենքը կոդիֆիկացված է, դատական համակարգի կազմակերպումը չի կարող թողնվել դատական մարմինների հայեցողությանը, սակայն դա չի նշանակում, որ դատարաններն օժտված չեն համապատասխան ազգային օրենսդրությունը մեկնաբանելու որոշակի ազատությամբ»*[4]*:*

10. Միևնույն ժամանակ, դատական մատչելիության իրավունքի համատեքստում Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է, որ

---

[3] Տե՛ս քրեական գործ, հատոր 31, թերթեր 57-75:

[4] Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Gorgiladze v. Georgia* գործով 2009 թվականի հոկտեմբերի 20-ի վճիռը, գանգատ թիվ 4313/03, 69-րդ կետ:

«Ներպետական դատական ատյանները դատավարական կանոնները կիրառելիս պետք է ձեռնպահ մնան դրանց չափազանցված ձևականացումից, որն իր ազդեցությունը կունենա դատավարության արդարացիության վրա»[5]:

11. Վճռաբեկ դատարանը *Գևորգ Հարությունյանի* գործով իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ *«(…) Գործերի պատշաճ ընդդատությունը, որպես արդար դատաքննության անհրաժեշտ բաղկացուցիչ, հիմնարար իրավական արժեք է: Դրա հիմնարար բնույթը բխում է արդար դատաքննության ինստիտուցիոնալ տարրից՝ անկախ, անկողմնակալ, իրավասու և օրենքի հիման վրա ստեղծված դատարան ապահովելու պետության պոզիտիվ պարտականությունից: Իսկ այդ պարտականությունն իր հերթին, ըստ էության, ամրագրված է Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում բարձրագույն իրավաբանական ուժ ունեցող այնպիսի նորմատիվ ակտերում, ինչպիսիք են ՀՀ Սահմանադրությունը (19-րդ հոդված), Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիրը (14-րդ հոդված) և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիան (6-րդ հոդված): (…)*

Պատշաճ ընդդատության հիմնարար իրավական նշանակությունն այն է, որ յուրաքանչյուր կոնկրետ քրեական գործը քննող դատարանի որոշման հստակ կանոնների առկայությունը և դրանց կանխատեսելի գործադրումն անհրաժեշտ պայման են կողմնակի դիտորդի մոտ այնպիսի համոզմունք ձևավորելու համար, որ տվյալ կոնկրետ քրեական գործը քննող դատարանը և դատավորը նախատրամադրվածություն չունեն, և տվյալ գործը վարույթ ընդունելիս սուբյեկտիվիզմն ու կամայականությունը բացառված են եղել:

Այսպիսով, քրեական գործերի ընդդատության որոշման հստակ, կամայականությունը բացառող կանոնների առկայությունը և գործադրումը պարտադիր նախապայման են արդարադատության մատչելիության պատշաճ երաշխավորման համար (…)»[6]:

---

[5] Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Walchli v. France* գործով 2007 թվականի հուլիսի 26-ի վճիռը, գանգատ թիվ 35787/03, 29-րդ կետ:

[6] Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Գևորգ Հարությունյանի* գործով 2011 թվականի հուլիսի 13-ի թիվ ԵԿԴ/0211/01/10 որոշումը, կետեր 15-16:

12. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 260-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «*1. Առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարաններին ընդդատյա են առաջին ատյանի կարգով իրականացվող բոլոր վարույթները, բացառությամբ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի հավելված N 1-ով նախատեսված կոռուպցիոն հանցանքների վերաբերյալ վարույթների, որոնք ընդդատյա են հակակոռուպցիոն դատարանին*»:

Նույն օրենսգրքի 261-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին ընդդատյա են այն վարույթները, որոնք վերաբերում են այդ դատարանի դատական տարածքում ենթադրաբար կատարված հանցանքներին՝ անկախ քննչական ենթակայության կանոններից:*

2. Եթե վարույթը վերաբերում է առաջին ատյանի ընդհանուր իրավասության տարբեր դատարանների դատական տարածքներում ենթադրաբար կատարված երկու կամ ավելի հանցանքներին, ապա մեղադրանքը քննում է այն դատարանը, որի դատական տարածքում ենթադրաբար կատարվել է վերջին հանցանքը:

(…)»:

12.1. ՀՀ քրեական օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետի համաձայն՝ ***«հափշտակություն՝*** *ուրիշի գույքն ապօրինի, անհատույց հանցավորինը կամ այլ անձինը դարձնելը: Հափշտակությունն ավարտված է համարվում, եթե հանցավորն այդ գույքն ապօրինաբար տնօրինելու կամ օգտագործելու իրական հնարավորություն է ունեցել»:*

Նույն հոդվածի 25-րդ կետի համաձայն՝ ***«շարունակվող հանցագործություն՝*** *մեկ միասնական դիտավորությամբ, միևնույն օբյեկտի դեմ ուղղված նույնական արարքներով հանցանքի կատարում»:*

ՀՀ քրեական օրենսգրքի 255-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «*1. Խարդախությունը՝ խաբեության կամ վստահությունը չարաշահելու եղանակով հափշտակությունը՝ (…)*»:

13. Տարածքային ընդդատությունը սահմանող ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի կարգավորումներից հետևում է, որ որպես քրեական գործերի դատական տարածքը որոշելու հիմնական կողմնորոշիչ պայման հանդես է գալիս **հանցանքի կատարման վայրը**:

ՀՀ քրեական օրենսգրքի 255-րդ հոդվածի 1-ին մասով ամրագրված հանցակազմի օբյեկտիվ կողմն արտահայտվում է ուրիշի գույքն ապօրինի, անհատույց հանցավորինը կամ այլ անձինը դարձնելով: Այսինքն, նշված հանցանքի կատարումն ավարտված է համարվում, երբ հանցավորն այդ գույքն ապօրինաբար տնօրինելու կամ օգտագործելու իրական հնարավորություն է ունեցել:

14. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից հետևում է, որ՝

- Հ.Թովմասյանին ՀՀ քրեական օրենսգրքի 255-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով և 255-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով մեղսագրվող վերջին հանցագործությունը շարունակվող է, որի՝ քրեական օրենքով չթույլատրված վերջին արարքը կատարվել է 2021 թվականի դեկտեմբերի 30-ին: Մասնավորապես, Է.Թովմասյանի նկատմամբ, ի թիվս այլնի, հանրային քրեական հետապնդում է հարուցվել այն բանի համար, որ վերջինս Գյումրի քաղաքի բնակիչ Էլիզաբեթ Սարաֆյանին տրամադրել է «Իդրամ» ինտերնետ վճարային համակարգի հաշվեհամար, որից հետո վերջինս նշված հաշվեհամարին փոխանցել է ընդհանուր 30.000 ՀՀ դրամ գումար, որը Հ.Թովմասյանի կողմից խաբեությամբ հափշտակվել է[7]:

- Համաձայն տուժող Է.Սարաֆյանի հարցաքննության արձանագրությանը կից առկա հեռախոսահամարների վերծանումների՝ մեղադրյալի կողմից ենթադրաբար օգտագործված հեռախոսահամարը վերոնշյալ ժամանակահատվածում սպասարկվել է Արարատի մարզի Ձրաշեն համայնքի Կամոյի փողոցի 2-րդ հասցեում[8]:

- Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2022 թվականի նոյեմբերի 16-ին որոշում է կայացրել քրեական գործն ըստ ընդդատության Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան փոխանցելու մասին՝ հիմքում դնելով այն, որ քրեական օրենքով չթույլատրված վերջին արարքը կատարվել է Արարատի մարզի Ձրաշեն համայնքի Կամոյի փողոցի 2-րդ հասցեից, որը գտնվում է Արարատի մարզում[9]:

---

[7] Տե՛ս սույն որոշման 4-րդ կետը:
[8] Տե՛ս քրեական գործ, հատոր 24, թերթեր 213-214:
[9] Տե՛ս սույն որոշման 5-րդ կետը:

- Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը գտել է, որ որ թիվ ՇԴ/0136/01/22 վարույթն ընդդատյա չէ իրեն, պատճառաբանելով, որ տուժող Է.Սարաֆյանը գումարը փոխանցել է մեղադրյալ Հ.Թովմասյանի կողմից նշված «Իդրամ» ինտերնետ վճարային համակարգի հաշվեհամարին Գյումրի քաղաքում տեղադրված տերմինալի միջոցով[10]:

15. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 8-13-րդ կետերում վկայակոչված իրավադրույթների և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ պետք է փաստել, որ ենթադրյալ հանցանքի կատարման ժամանակ մեղադրյալ Հ.Թովմասյանը գտնվել է Արարատի մարզի Ջրաշեն համայնքի Կամոյի փողոցի 2-րդ հասցեում: Հետևաբար, վերջինս ստացված գույքը տնօրինելու կամ օգտագործելու իրական հնարավորություն ստացել է գտնվելով Արարատի մարզի տարածքում:

Վերոգրյալի հիման վրա գտնում եմ, որ Հ.Թովմասյանին մեղսագրված վերոնշյալ ենթադրյալ հանցավոր արարքը կատարվել է Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատական տարածքում:

Այսպիսով, հիմք ընդունելով վերոշարադրյալը՝ գտնում եմ, որ Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի հետևությունն այն մասին, որ թիվ ՇԴ/0136/01/22 քրեական վարույթն ընդդատյա է Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին, հիմնավոր չէ:

Ինչ վերաբերում է Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի կողմից իր որոշման հիմքում դրված այն հանգամանքներին, որ սույն վարույթի մասնավոր մասնակիցների մեծամասնությունը բնակվում են Շիրակի մարզում և նրանցից ոմանք դիմում են ներկայացրել՝ խնդրելով քրեական վարույթը չփոխանցել ըստ ընդդատության[11],

---

[10] Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:
[11] Տե՛ս նույն տեղում:

ապա դրանք կարող են քննարկվել բացառապես ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 261-րդ հոդվածի 5-րդ մասի կարգավորման շրջանակներում:

Միաժամանակ, Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի վկայակոչած՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 261-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված՝ մինչդատական վարույթն իրականացրած նախաքննության մարմնի նստավայրի գտնվելու փաստարկը տվյալ պարագայում ևս չի կարող որոշիչ լինել, քանի որ այն կարող է կիրառելի լինել միայն ենթադրյալ հանցագործության կատարման հստակ վայրը որոշելու անհնարինության դեպքում:

16. Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդվածի 6-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Թիվ ՇԴ/0136/01/22 քրեական վարույթն ըստ մեղադրանքի՝ Հայկազ Ցոլակի Թովմասյանի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 255-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով և 255-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով, ընդդատյա է Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին:

ՀԱՄԼԵՏ ԱՍԱՏՐՅԱՆ